ՁԵՐ ԳՐԱԴԱՐԱԿԻՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՎԻԿՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



20-րդ դարավերջի վիրահայ բանաստեղծ, արձակագիր Վիկտոր Հովսեփյանի «Նանե՛, նանե՛, կրակ տուր ինձ» մանկական ժողովածուն, որն ամփոփում է հեղինակի տպագրված եւ անտիպ մանկական բանաստեղծությունները, հեքիաթները, լույս տեսավ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղի Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարանի եւ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնի նախաձեռնությամբ:

Ժողովածուն հեղինակի ետմահու տպագրված 7-րդ գիրքն է, որտեղ տեղ են գտել 1986 թվականին լույս տեսած «Չալ գոմեշի հեքիաթը» («Արեւիկ» հրատարակչություն, Երեւան), 1996 թվականին լույս տեսած «Չուկն ու երիցուկը» («Մերանի» հրատարակչություն, Թբիլիսի) մանկական ժողովածուներում եւ մամուլում տարբեր տարիների տպագրված ստեղծագործությունները, ինչպես նաեւ որոշ կտորներ անտիպից:

Վիկտոր Հովսեփյանը, բացի բանաստեղծական տաղանդից, օժտված էր նաեւ նկարչական տաղանդով: Եվ պատահական չէ, որ նոր գրքի նկարազարդումները եւս հեղինակինն են, որ մաս-մաս, կտորկտոր հավաքվել են գիրքը կազմողի կողմից (Գիսանե Հովսեփյան) եւ զարդանախշել ժողովածուն: Գրքի խմբագիրը Ժորա Սնխչյանն է: Գիրքը, իրավամբ, վերջին շրջանի հայ մանկական գրականության լավագույն էջերից մեկը կարելի է համարել:

* * *

«Նանե՛, նանե՛, կրակ տուր ինձ» ժողովածուն երկու մասից է կազմված: Երկու մասերում էլ, իբրեւ քնարական գլխավոր հերոսների, հանդիպում ենք «Նանե»-ների. առաջինը հեղինակի տատն է՝ Խազո մեծ նանեն, երկրորդը՝ հեղինակի դուստրը՝ փոքրիկ Նանեն: Գրքի առաջին մասը կրում է «Ասի՝ Նանե՛...» խորագիրը: Այստեղ ամփոփված բանաստեղծությունների թեման հիմնականում վերցված է բանաստեղծի մերձավորների առօրյայից:

«Ասի՝ Նանե՛...» բաժնում բերված բանաստեղծությունները կարելի է դասակարգել՝ ըստ ժանրերի, որտեղ բավական հետաքրքիր շարք են կազմում բանահյուսական կտորների հովսեփյանական մեկնաբանումները: Գրքի այս մասում տեղ են գտել ժողովրդական բացուխուփի խաղեր, մանկական խաղիկներ, հավատալիքներ: Այսպես՝ «Երեքնուկը» հեղինակի ծննդավայր Հեշտիայում առ այսօր պահպանվող վիճակի խաղ է, երբ երեխաները երեքնուկի թփերի վրա իրենց երազանքներն են դնում ու երեք թփերից մեկի հետ քաշում իրենց վիճակված բախտը: «Խատուտիկ ծաղիկը» մանկական կենցաղային խաղերից մեկն է. խատուտիկի ցողունը որպեսզի նվագի, երեխան այն փչելուց առաջ մոգական խոսքեր պիտի ասի՝ «թոնիր թալեմ, պտպտաս, ելնես երդիկ՝ ճթճթաս...»:

«Հափիշտն ու ճիշտը» բանաստեղծությունը վերցված է մանկական կենցաղից: Մանուկների կենցաղից է «Կաչաղակը» բանաստեղծությունը: «Չ» տառի կրկնությամբ ստերը շարան արած «կաչաղակին» շատերս ճանաչում ենք մեր ընկերների շարքում ու այս բանաստեղծությամբ սովորում սուտասանին ճիշտն ասել տալու ձեւը:

Գրքի այս մասում կարմիր գծի պես անցնում է հովսեփյանական «ցոլքի» փիլիսոփայությունը, որ բանաստեղծությունը

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

COVID-19

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. 21 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, 14 ՄԻԼԻՈՆ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում կորոնավիրուսի վարակի՝ COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 21 089 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 757 674 հազարը: Ապաքինվել է ավելի քան 14 միլիոն մարդ:



Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 5 415 977** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **170 419** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **3 229 621-ի**, մահացածներինը՝ **105 564-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ վարակվել է **2 464 316** մարդ, մահացել՝ **48 177-ը**: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **912 823**, վարակի հետեւանքով մահացել՝ **15 498** մարդ:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **41 299-ի**, մահացածներինը՝ **814-ի**, ապաքինվածներինը՝ **34 164-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **33 915** մարդ: Վարակից մահացել է **500**, ապաքինվել՝ **31 269** մարդ:

Օգոստոսի 14-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **1 306** մարդ, մահացել է **17-ը**, ապաքինվել՝ **1085-ը**:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՃԵ. «ՊԱՏՐԱՆՔՆԵՐՈՎ ՉՏԱՐՎԵՆՔ՝ ԻԲՐ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՆՔ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԸ»

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԻ ԱՆՑԵԼ

Վրաստանի հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, տարածված է տեղեկատվություն, ըստ որի, Թբիլիսիում եւ տարածաշրջաններում անցկացվում են բազմամարդ հարսանեկան կամ այլ տեսակի հավաքներ, ինչն անթույլատրելի է եւ մեծացնում է վարակի տարածման հավանականությունը:

Ամիրան Գամղրելիձեն հերքական անգամ բնակչությանը զգուշացրել է, որ կորոնավիրուսի վարակը հաղթահարված չէ, եւ վիրուսի տարածման տեսանկյունից ռիսկերը դեռեւս պահպանվում են: Չնայած, որ վարակման ընթացքը կառավարման ներքո է, եւ վավերացվում են վարակման առանձին դեպքեր, բնակչությունը չպետք է ենթարկվի պատրանքների, իբր վարակը հաղթահարվել է:

- Ճիշտ է, վարակման գործընթացը լրիվությամբ վերահսկվում է եւ, այսօրվա դրությամբ, վարակվածների 82 տոկոսն առողջացել է, երկրում խուճապի ոչ մի պատճառ չկա, թեեւ կրկին ցանկանում եմ զգուշացնել բնակչությանը՝ չտարվեն պատրանքներով, թե իբր կորոնավիրուսի վարակը հաղթահարել ենք,- հայտարարեց հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի ղեկավարն ու հավելեց՝ սահմանափակումների որոշակի մասի վերացումը, ինչպես նաեւ առանձին ավիաչվերթերի վերականգնումն է՛լ ավելի է մեծացնում վարակի տարածման հավանականությունը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն, կորոնավիրուսի դեմ ռուսների մշակած պատվաստանյութը լայնածավալ երրորդ փուլի հետազոտությունները չի անցել, ուստիեւ դրան լիովին վստահել չի կարելի: Նրա խոսքով, պատվաստանյութի դեմ կասկածանքով են տրամադրված նաեւ միջազգային առողջապահական կենտրոններում:

- Որքանով տեղեկացված եմ, այն լայնածավալ երրորդ փուլի հետազոտություն չի անցել կամ, եթե անցել է, արդյունքները չեն հրապարակվել, ուստիեւ կասկածով եմ վերաբերվում դրան: Ավելացնեմ, որ չեն հրապարակվել այդ պատվաստանյութի ո՛չ առաջին երկու փուլերի հետազոտման եւ ո՛չ էլ երրորդ՝ ամենանշանակալի փուլի արդյունքները,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

ՊԱԱՏԱ ԻՄՆԱԶԵ. «ԵԹԵ ՉՊԱՀՊԱՆԵՆՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԱՅՆ ԻՆՉ ԱՅՍՕՐ ՈՒՆԵՆՔ, ԱՅԼԵՎՍ ՉԵՆՔ ՈՒՆԵՆԱ»



Վրաստանի հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեն, մեկնաբանելով օրերս կորոնավիրուսի հաստատված 30 դեպքերը, որոնք կապված են նույն կլաստերի հետ, նշեց, որ դրանք շատ են, ուստի, այն միջոցառումները, որոնք անցկացվել են Սվանեթիայում, պարտադիր էին:

Ն ր ա խոսքով, օգոստոսի 11-ին 12 նոր դեպք է արձանագրվել Մեստիայում:

- Այստեղից հինգ դեպք արձանագրվել է Թբիլիսիում: Մնացած դեպքերը կապված են Սվանեթիայի հետ:

Անդրադառնալով Ղազբեգիի շրջանում կորոնավիրուսի վարակման փաստերին՝ Պաատա Իմնաձեն նշեց, որ Ղազբեգիի շրջանը Մեստիայից տարբերվում է նրանով, որ հիմնականում վարակված է բարձր ռիսկային խումբը:

- Ղազբեգիի շրջանում տարբերությունն այն է, որ հիմնականում վարակված են բարձր ռիսկային խմբեր, ովքեր ամեն օր շփում ունեն մեկ, երբեմն նաեւ տասնյակ վարակակիրների հետ, երբ նրանք մուտք են գործում երկիր: Հիշեցնենք, որ վարակված է բեռնատարների ավելի քան 110 վարորդ: Նրանք մեծ մասամբ թեստավորվում են սահմանին:

Բացի այդ, մեր բազմաթիվ քաղաքացիներ վերադառնում են Ռուսաստանից, ամառ է, եւ նրանց թվում կան բազմաթիվ վարակակիրներ, ովքեր տեղափոխվում են կարանտինային գոտիներ: Այս բոլոր մարդիկ շփում ունեն սահմանապահների հետ, իհարկե, մասնագիտական ռիսկը բարձր է: Ուստի, սա է տարբերությունը Մեստիայի եւ Ղազբեգիի միջեւ,- հայտարարեց Պաատա Իմնաձեն եւ հավելեց, որ եթե չպաշտպանենք տարրական կանոնները, հավաստիացնում եմ՝ այն, ինչ մինչեւ այսօր ունենք, այլեւս չենք ունենա, եւ իրավիճակը կարող է դառնալ այնպիսին, ինչպիսին հարեւան երկրներում է:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԻ ՆՈՐ ՕՋԱԽ, ԱՅՍ ԱՆԳԱՄ՝ ՍՎԱՆԵԹԻԱՅՈՒՄ

Օգոստոսի 10-ին, Սվանեթիայի երկրամասի Մեստիայի մունիցիպալիտետում հայտարարվեց խիստ կարանտինային պայմանակարգ: Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, միջգերատեսչական համակարգող խորհրդի սույն որոշումը պայմանավորված էր նրանով, որ նախօրեին մունիցիպալիտետի կենտրոնում, Ուշգուլի եւ Լենջերի գյուղերում, հաստատվել էր վարակման 17 դեպք:

Ընդունված որոշման համաձայն, տեղում արգելված է տեղաշարժը, իսկ նրանք, ովքեր Մեստիայից դուրս կգան, 14-օրյա պարտադիր կարանտին կանցնեն: Տեղաշարժի սահմանափակումներ են գործարկվել նաեւ Մեստիա ավանի եւ այլ գյուղերի միջեւ:

Միգերատեսչական համակարգող խորհրդի նիստում Գիորգի Գախարիան հայտարարեց, որ Մեստիայում կան բազմաթիվ զբոսաշրջիկներ, սակայն նրանց մասին կհոգա պետությունը, եւ նրանք խնդիրներ չեն ունենա: Մասնավորապես, կորոնավիրուսի դեպքերի բացահայտման հետ կապված, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության զբոսաշրջության ազգային վարչությունը, կառավարության համակարգող խորհրդի հանձնարարությամբ, Մեստիայի մունիցիպալիտետում գործող 20 հյուրանոց սեղմ ժամկետում վերածել է կարանտինային տարածքի:

Հիվանդությունների վերահսկողության ազգային կենտրոնի տեղեկատվությամբ, մինչ այս պահը տեղում արվել է ավելի քան 400 թեստ, 500 մարդ կարանտինում է, կառավարությունը հոգում է կարանտինային գոտիներ ստեղծելու հարցը: Այս ուղղությամբ զբոսաշրջային վարչությունն արդեն միջոցներ է ձեռնարկել 18 հյուրանոցներ՝ 327 սենյակով հանդերձ, կծառայեն որպես կարանտինային տարածք: Այս հյուրանոցները լիովին համապատասխանում են առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանված չափանիշներին:

Զբոսաշրջության ազգային վարչությունում հայտարարեցին, որ այս պահի դրությամբ կարանտին է տեղափոխվել 518 քաղաքացի, այստեղից 343-ը՝ Մեստիայի հյուրանոցներ, իսկ 171-ը՝ Աջարիայի շրջանի կարանտինային տարածքներ:

Զբոսաշրջության ազգային վարչությունը շարունակում է քաղաքացիներին տեղափոխել կարանտինային տարածքներ: Անհրաժեշտության դեպքում, Սվանեթիայում կամ հարակից շրջաններում, կավելացվեն կարանտինային տարածքներ:

Հիշեցնենք նաեւ, որ Մեստիայում, Ուշգուլիում եւ Լենջերիում աշխատելու իրավունք ունեն միայն դեղատները, բանկերը, սննդամթերքի խանութներն ու բացօթյա սննդի կետերը:

ՁԵՐ ԳՐԱԴԱՐԱԿԻՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՎԻԿՏՈՐ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

ները ժամանակային սահմանափակումներից՝ մանկական, ոչ մանկական, տեղափոխում է դիցաբանական մի անդորր միջավայր, ուր չկա անցյալ ու ապառնի, ուր ներկան է մարդկության ուղեկիցը:

«Ձուկն ու երիցուկը», «Անանուխը», շնչավորված բնության գունագեղ պատկերներին զուգահեռ, պատմում են ցոլք դարձած անանուխի, երիցուկի ու ցոլք չդարձած ձկան մասին:

* * *

«Նանե', նանե', կրակ տուր ինձ» գրքի երկրորդ՝ «Հեքիաթի ձիու հեքիաթը» բաժնում ներկայացված են հեքիաթի (նաեւ՝ զրույցի) ժանրին վերագրվող ստեղծագործություններն՝ իրենց ծանոթ ու անծանոթ հերոսներով, իրենց ծանոթ ու անծանոթ սյուժեներով, տեղ-տեղ խրատական ավարտով, տեղ-տեղ՝ երկնքից ընկնող խնձորներով: Այս հեքիաթները հիմնականում Մուշից ու Էրզրումից Հեշտիա հասած բանահյուսական կտորներ են, որոնց մեծ մասը բանավոր այսօր էլ ապրում է Վրաստանի գեղատեսիլ այս եզերքում: Էրզրումցի (կարինցի) ու մշեցի են եղել Վիկտոր Հովսեփյանի պապերը, որ Սամցխե-Ջավախեթի են տեղափոխվել 1829-1830-ական թվականներին: Ժողովրդական բանահյուսությունը Վիկտոր Հովսեփյանի ստեղծագործության ամենակենսունակ ակունքներից է, որը վառ դրսեւորվում է մանկական այս գրքում: Ավելին. բարձրագույնն ավարտելուց հետո, Վիկտորը բանագիտության, մասնավորապես՝ բանահյուսության մեջ խորանալու ծրագրեր ուներ, եւ այս ուղղությամբ բավական ուշագրավ է նրա գրական արխիվը:

«Հեքիաթի ձիու հեքիաթը» բաժնում ներկայացված հեքիաթների ասացողը մեծ Նանեն է՝ Խազո տատը: Ժողովրդական զրույցների հիմքի վրա են կառուցված «Շուշանի հեքիաթը» (ինչպես է Շուշան անունով աղջիկը շուշան-ծաղիկ դարձել), «Լուսատտիկի հեքիաթը» (ինչպես եղավ, որ լուսատտիկը լույս տալ սկսեց), «Ծառերը» (ինչո՞ւ ծառերը չեն նստում), «Ամպի հեքիաթը» (ինչո՞ւ է անձրեւից առաջ ամպը «գոռում»), «Կատվի ու մկների հեքիաթը» (ինչո՞ւ են կատվի աչքերը լույս տալիս), «Միջնեկ այծի հեքիաթը» (որտեղի՞ց է երկնքում հայտնվել յոթ լուսավոր աստղերով աստղաբույլը)...

Ավանդազրույցների վրա են հիմնված «Հերն ու որդին», «Պառավի ուլերը», «Շվոտի հեքիաթը»:



Մանուկների շրջանում առ այսօր պահպանվող հավատալիքների հետ է կապված «էշի զռռոցի հեքիաթը». աղջնակները էշի զռռոցի հետ եթե քաշեն իրենց մազերը, մազերը կերկարեն, իսկ եթե ծափ տան ու պարեն, ապա չեն մեծանա:

«Ծաղկահեքիաթն» ամբողջությամբ հավատալիքների շարան է: Այսպես, եթե մարդու այտը վառվում է, ապա նրան բամբասում են: Եթե մարդու ականջը կանչում է, ապա նա անպայման մի լուր կլսի: Եթե մարդու աչքը սառում է, ապա հյուր կունենա... Այս հավատալիքներն այսօր առատորեն զարդարում են հեշտիացիների առօրյան:

«Արջը՝ կեսուր, Նանեն՝ հարս» խաղիկը արջի ու աղջկա թափառող սյուժեի Մշո-Էրզրումի-Ջավախքի տարբերակն է, որ այսօր էլ պատմում են Վիկտոր Հովսեփյանի ծննդավայրում: Ընդ որում, պատմությանը սովորաբար նախորդում է մանկական խաղիկը, որն ավելի հաճախ թոռնուհիների մազերը սանրելիս են երգում տատիկները.

«Արջու փլերն մավի ին, / Արջն աղջկաս դավի է, / Արջու փլերն մասուր ին, / Արջն աղջկաս կեսուր է»:

Անզուգական կտոր է «Հեքիաթի ձիու հեքիաթը», որը պատմում է այն մասին, թե ինչպես մանուկ հասակից հեքիաթի ձիու հեքիաթը լսած բանաստեղծը որոշում է ստուգել հեքիաթի ստույգությունը, թե՝ ճի՞շտ է, որ աստղերին մոտ քունքը ձյունոտ լեռան ստորոտի լճում ճոխ պոչով ու փրփուր բաշով ձի կա:

Հեղինակի ծննդավայրում այսօր էլ պատմում են այս հեքիաթը, որ, այո', Աբուլ լեռան ստորոտի ականակիտ լճի հատակին հրեղեն-ջրեղեն ձի կա, ու այս ձին ժամանակ առ ժամանակ ալեկոծում է ջրի ջինջ հայելին, դուրս է գալիս լճից, սուրում-սավառնում է դեպի արեւը... Այս պատմությունը «Սասունցի Դավիթ» էպոսի Սանասարի ձիու պատմությունն է հիշեցնում:

Ասենք նաեւ, որ մանկական ստեղծագործությունները «Նանե', նանե', կրակ տուր ինձ» խորագրի տակ հավաքել է ինքը՝ հեղինակը: Այս նույն անվանումով տատ ու թոռան խաղն այսօր էլ տարածված է Հեշտիայում:

Տատը զույգ ձեռքի մատներն իրար է հպում՝ ափերը փոքր-ինչ բաց պահած, իսկ թոռը տատի ճկույթ մատների հպման կետին դնում է իր ցուցամատն ու խնդրում տատին կրակ տալ իրեն: Այս խաղը հեշտիացիների պապերը Էրզրումից ու Մուշից են իրենց հետ բերել, հասցրել Հեշտիա: Այն Նանե դիցուհու հիշողությունն ունի իր մեջ, եթե նկատի ունենաք, որ Նանեն՝ Արամազդի դուստրը, հայոց դիցարանի իմաստնության լույսի հովանավորն ու պաշտպանն է, իսկ հայ ընտանիքներում իմաստնության լույսի ակունքն ու հովանավորը ընտանիքի Մեծ Մայրն է, ում եւ տվել են Արամազդ աստծո իմաստուն դստեր՝ Նանեի անունը: «Նանե', նանե', կրակ տուր ինձ»,- ասել է թե՝ տատի, տատի, կրակ տուր ինձ... Այս կրակը իմացության այն լույսն է, որի պահապանն էր Նանե դիցուհին, որի պահապանն է ընտանիքի տատը՝ նանեն:

Այսպիսին է եղել Վիկտոր Հովսեփյանի Խազո նանեն՝ 40 տարեկանից անկողնուն գամված կինը, որ ասք ու հեքիաթներով իր փեշին կապած է պահել թոռներին՝ Աստվածաշնչով ու ժողովրդական իմաստնությամբ նրանց աչքերը բացելով կյանքի ու կենաց խորհրդի վրա:

* * *

Վիկտոր Հովսեփյանի գրական ժառանգության մաս են կազմում Վրաստանի Ջավախք աշխարհի (մասնավորապես՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա, Ուչմանա, Թորիա գյուղերի) ժողովրդական բանահյուսության գրառումները: Երկհատոր անտիպ բանահյուսական գրառումներն ամփոփում են ժողովրդական խաղեր, խաղիկներ, հանելուկներ, առածներ ու ասացվածքներ, հեքիաթներ: Բանաստեղծը, գրառումներն անելիս, երբեմն նաեւ ձայնագրել է ասացողներին: Այդ ձայնագրությունները եւս մեքենագիր տարբերակներին կից պահպանվում են Վիկտոր Հովսեփյանի թանգարանում: Առաջիկայում բանաստեղծի ընտանիքը՝ տիկնոջ՝ Թերեզա Հովսեփյանի նախաձեռնությամբ, նպատակ ունի տպագրել բանահյուսական գրառումները, որոնք կհարստացնեն հայ բանահյուսության շտեմարանը եւ, անտարակույս, իրենց գունեղ երանգը կավելացնեն Վրաստանի մշակութային գունավոր ներկապնակին:

ԲՈՆԴՈ ԱՐՎԵԼԱՋԵ
Հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՑՈՒՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՆՉՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

«Միջազգային հանրապետական ինստիտուտը» (IRI), Մերձբալթյան հետազոտության եւ «ԳԵԼԱՓ»-ի կազմակերպության ներկայացուցիչ, դոկտոր Ռաս Ալիշաուսկինեսի կողմից ընթացիկ տարվա հունիսի 4-ից հուլիսի 2-ը ներառյալ, պատահական ընտրության սկզբունքով անցկացրին հետազոտություն:

Հարցման ենթարկվեց ընտրական իրավունք ունեցող 1500 քաղաքացի: Հարցման տվյալները դասակարգվեցին ըստ հարցման ենթարկվածների տարիքի, գենդերային եւ տարածաշրջանային մոտեցման համապատասխան: Սխալի հնարավորությունը կազմում է +/-2,5 տոկոս: Հետազոտությունն իրականացվեց ամերիկյան ժողովրդի աջակցությամբ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության շնորհիվ:

«Միջազգային հանրապետական ինստիտուտի» կողմից տարածած տեղեկատվության մեջ նշված է, որ ազգային մասշտաբով անցկացված հետազոտությունը ցույց տվեց, որ երկրի բնակչության կողմից դրական գնահատական է տրվել կորոնավիրուսի կառավարման գործընթացում կառավարության գործունեությանը: Միաժամանակ, հարցումը ցույց տվեց քաղաքացիների անհանգստությունը համավարակի արդյունքում տնտեսական անկման կապակցությամբ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎՍ ՄԵԿ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

IRI-ի հարցման արդյունքներով, բնակչության մեծամասնությունը՝ 79 տոկոսը, ընկալմամբ ընդունեց եւ պաշտպանում է կորոնավիրուսի դեմ պայքարում երկրի գործադիր իշխանության ձեռնարկած միջոցառումները: Հարցման ենթարկվածների 58 տոկոսը հավանություն է տալիս հակահամավարակային ծրագրի շրջանակներում կառավարության կողմից իրականացվող սոցիալական նախագծերին:

Եվս մեկ հատկանշական փաստ. բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 94 տոկոսը, բարձր է գնահատում եւ արտակարգ արդյունավետ է համարում COVID-19-ի դեմ պայքարում Վրաստանի հիվանդությունների վերահսկողության ու հասարակական առողջապահության ազգային կենտրոնի գործունեությունը, 91 տոկոսի գնահատմամբ, նշանակալից աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ երկրի առողջապահության նախարարությունը: Կորոնավիրուսի դեմ պայքարում վարչապետի գրասենյակի գործունեությանը դրական արձագանք է տվել հարցման ենթարկվածների 81 տոկոսը:

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

«Միջազգային հանրապետական ինստիտուտի» կողմից անցկացված հարցման արդյունքները եւս մեկ անգամ ընդգծեցին երկրի իշխանությունների կողմից կորոնավիրուսի դեմ պայքարի արդյունավետությունը: Հարցման արդյունքներով, բնակչության 89 տոկոսը Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին համարում է երկրի ամենաազդեցիկ անձնավորությունը: Գործունեության գնահատման տեսանկյունից բնակչության 74 տոկոսն ընդգծում է Ամիրան Գամղրելիձեի դերը համավարակի դեմ պայքարի գործում: Այդ առումով նշանակալից է վարչապետ Գիորգի Գախարիայի (63 տոկոս) եւ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի (57 տոկոս) գործունեությունը: Ինչ վերաբերում է ընդդիմադիր գործիչներին, ապա հարցման ենթարկվածների 53 տոկոսի կարծիքով, նշանակալից է Դավիթ Բաքրաձեի դերը: Բիձինա Իվանիշվիլու գործունեությանը հավանություն է տվել 41 տոկոսը:

ԵՐԿԻՐԸ ՁԱՐԳԱՆՈՒՄ Է ՃԻՇՏ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

IRI-ի կողմից անցկացված հարցումը ցույց տվեց, որ նշանակալի ավելացել է այն մարդկանց թիվը, ովքեր երկրի զարգացման հիմնական վեկտորը ճիշտ են համարում: Հատկանշական է, որ 2019 թվականի հոկտեմբերին վերոնշյալ կազմակերպությունների կողմից անցկացված հարցման արդյունքներով, բնակչության ընդամենը 22 տոկոսն էր համամիտ երկրի զարգացման վեկտորին, ապա ներկայիս հարցումը ցույց տվեց այդ մարդկանց թվի ավելացման ակնհայտ միտումը: 36 տոկոսը ճիշտ է համարում երկրի զարգացման ուղղությունը:

ԷԿՈՆՈՄԻԿԱՆ՝ ԳԼԽԱՎՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

Չնայած COVID-19-ի դեմ պայքարում ձեռք բերած հաջողություններին, Վրաստանի բնակչության 82 տոկոսը, հարցման արդյունքների համաձայն, համոզված է, որ համավարակի արդյունքում երկրի էկոնոմիկան զգալիորեն կտուժի: Հարցման ենթարկվածների 65 տոկոսի համոզմամբ, տնտեսական վիճակն առանձնակի մեծ ազդեցություն կունենա իրենց ընտանիքների բարեկեցության վրա, իսկ 67 տոկոսը տնտեսական անկման հետեւանքները շատ ավելի ծանր է համարում:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԷԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Միջազգային հանրապետական ինստիտուտի» կողմից անցկացված հարցումը ցույց տվեց, որ բնակչության միայն 54 տոկոսն է տեղեկացված կառավարող «Վրացական երազանք» եւ Միացյալ ընդդիմության միջեւ մարտի 8-ին ձեռք բերված պայմանավորվածության մասին: Ինչ վերաբերում է վերոնշյալ պայմանավորվածության արդյունքում ընտրական օրենսգրքում իրականացված փոփոխություններին, ապա հարցման ենթարկվածների 77 տոկոսն այն գնահատում է դրական, ընդ որում՝ առանձնակի բարձր գնահատական է տալիս 41 տոկոսը, իսկ 36 տոկոսը համամիտ է իրականացված փոփոխություններին:

ԵԹԵ ԱՅՍՕՐ ԱՆՑԿԱՑՎԵԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՀԱՎԱՔԵՐ 33, ԻՍԿ «ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ»՝ 16 ՏՈԿՈՍ ՁԱՅՆ

«Միջազգային հանրապետական ինստիտուտի» (IRI) հասարակական կարծիքի հարցման արդյունքներով, եթե այսօր անցկացվեն խորհրդարանական ընտրությունները, ապա բնակչության 33 տոկոսը նախապատվությունը կտար իշխող «Վրացական երազանք» կուսակցությանը: Նույն հարցման արդյունքներով, ընդդիմադիր կուսակցություններից ամենաբարձր վարկանիշն ունի «Միասնական ազգային շարժումը»՝ 16 տոկոս: Մյուս կուսակցությունների հարցում հարցման արդյունքները հետեւյալն են. «Եվրոպական Վրաստան»՝ 5 տոկոս, «Նոր Վրաստանի համար» (Գիորգի Վաշաձե)՝ 3 տոկոս, «Հայրենասերների ալյանս»՝ 3 տոկոս, «Լեյբորիստական կուսակցություն»՝ 2 տոկոս,«Քաղաքացիական շարժում» (Ալեկո Էլիսաշվիլի)՝ 2 տոկոս, «Լելո՝ Վրաստանի համար»՝ 2 տոկոս, «Գիրչի»՝ 2 տոկոս, «Ժողովրդավարական շարժում - Միասնական Վրաստան» (Նինո Բուրջանաձե)՝ 1 տոկոս, «Հաղթանակած Վրաստան» (Իրակլի Օքրուաշվիլի)՝ 1տոկոս: Մյուս կուսակցությունների օգտին կքվեարկեր հարցման ենթարկվածների մեկ տոկոսը, իսկ 17 տոկոսն այդ հարցում դեռեւս չի կողմնորոշվել:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է, ՍԱԿԱՅՆ ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՎԵՐԱՑՎՈՒՄ ԵՆ

Օգոստոսի 12-ի Հայաստանի Ազգային ժողովի հատուկ նիստում քննարկվեց Հայաստանում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու հարցը:

Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանի տեղեկացմամբ, փաստաթղթով նաեւ նախատեսվում է որոշ չափով թուլացնել սահմանափակումները: Ըստ այդմ, այսուհետեւ կթույլատրվի հավաքների եւ գործադուլների անցկացումը, որոնց ընթացքում մասնակիցները պարտավոր կլինեն կրել դիմակներ ու միմյանց միջեւ պահպանել առնվազն 1,5 մետր հեռավորություն:

Կթույլատրվի ընտանեկան եւ ժամանցային բնույթի միջոցառումների կազմակերպումը, անցկացումն ու դրանց մասնակցությունը՝ պարետի սահմանած կանոններով: Նման միջոցառումներին սակայն, կարող է մասնակցել ոչ ավելի, քան 40 մարդ:

Նշվել է, որ ժամանցային բնույթի միջոցառումներ են համարվում համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները, սպորտային, մշակութային կամ կրթադաստիարակչական ու ժամանցային բնույթի այլ միջոցառումները, եթե դրանց կազմակերպումն ու անցկացումը չեն համարվում տնտեսական գործունեություն:

Ընտանեկան են համարվում տոնական եւ հիշատակի արարողությունները՝ ներառյալ ծննդյան, հարսանյաց, նշանադրության, հոգեհանգստի ու հուղարկավորության արարողությունները:

Փաստաթղթով վերացվել է Հայաստանի քաղաքացիությունն չունեցող անձանց Հայաստան մուտքի արգելքը, սակայն մուտք գործելով երկիր, տվյալ քաղաքացիները պետք է ինքնամեկուսանան: Այդ ընթացքում նրանք կարող են հանձնել թեստ, եւ եթե թեստի պատասխանը բացասական լինի, կարող են դուրս գալ ինքնամեկուսացումից:

Մեկ այլ դրույթով վերացվել է մաքսային սահմանով ապրանքների փոխադրման սահմանափակումներ կիրառելու հնարավորությունը:

Տիգրան Ավինյանը հայտնել է, որ կառավարության որոշմամբ սեպտեմբերի 15-ից կբացվեն հանրակրթական դպրոցները, նախնական եւ միջին մասնագիտական հաստատությունները, արվեստի, երաժշտական եւ գեղարվեստի դպրոցները, իսկ բուհերի ու մի շարք այլ ուսումնական հաստատությունների վերաբերյալ որոշում կկայացվի առաջիկա շաբաթվա ընթացքում:

Հանրագումարելով խոսքը՝ փոխվարչապետը նշեց, որ ստեղծված իրավիճակում արտակարգ դրության ռեժիմի երկարաձգումն այս փուլում փաստացի իրավական լավագույն լուծումն է:

Քվեարկության արդյունքում խորհրդարանը չի ընդունել «Լուսավոր Հայաստան» խմբակցության ներկայացրած «Արտակարգ դրությունը վերացնելու մասին» Հայաստանի Աժ որոշման նախագիծը: Նշենք, որ Աժ «Իմ քայլը» խմբակցությունը դեմ է քվեարկել:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԱՇՆԱՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՇԱՆՍ ՈՒՆԵՆՔ»

Օգոստոսի 12-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Անդրադառնալով կորոնավիրուսի համավարակով պայմանավորված իրավիճակին՝ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ դիմակների պատշաճ կրման դեպքում կարող ենք արձանագրել, որ կորոնավիուսի հետ կապված խնդիրը լուծել ենք:

- Մենք այսօր շանս ունենք աշնանն ընդհանրապես լինել բոլորովին ուրիշ՝ հաղթահարման վիճակում, անկախ նրանից, թե աշխարհում ինչ կկատարվի: Այն դեպքում, եթե սովորենք ապրել կորոնավիրուսի հետ: Դա նշանակում է մեկ բան՝ դիմակի կրման բացառիկ կարգապահություն: Եթե մենք դիմակի կրման պատշաճ մակարդակ ապահովենք, կարող ենք արձանագրել, որ գործնականում կորոնավիրուսի հետ կապված խնդիրը լուծել ենք: Եթե ոչ, կրկին վերադառնալու ենք հուլիսի վիճակին,- ասաց վարչապետը՝ հավելելով, որ հուլիսին եղած իրավիճակին վերադառնալու դեպքում, առողջապահական համակարգը պատրաստ է:

Նրա խոսքով, համակարգն անցած ամիսներին համալրվել է նոր հզորություններով, որոնք, անկախ կորոնավիրուսից, կօգնեն համակարգին առավել պատրաստ լինել առողջապահական տարբեր խնդիրների:

Նիկոլ Փաշինյանը նկատեց, որ աշխարհի տարբեր երկրներ վերադառնում են դիմակի կրման պարտադիր պահանջին, քանի որ որոշ թուլացումներից հետո, կրկին համաճարակի զարգացման վտանգը մեծացել է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ ԴԱՍԵՐԸ ԿՎԵՐՍԿՍՎԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ

Սեպտեմբերի 15-ից դասերը կվերսկսվեն Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցներում, նախնական եւ միջին մասնագիտական հաստատություններում, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:

- Դասերը կլինեն առկա ուսուցմամբ եւ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: Բուհերի եւ մի շարք այլ ուսումնական հաստատությունների մասով որոշումները կկայացվեն առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում: Պարետատունը, մեր մյուս գործընկերները եւ նախարարությունը համատեղ մշակել են բոլոր հարցերի մանրամասն ընթացակարգերն ու ուղեցույցները, որոնք կիրապարակվեն եւ կտարածվեն առաջիկա օրերին: Խնդրում ենք այս հարցում հետեւել բացառապես պաշտոնական լրահոսին՝ կառավարության, պարետատան, նախարարության եւ նախարարի էջերին,- գրել է Հարությունյանը:

Դիմելով ուսուցիչներին, ծնողներին եւ աշակերտներին՝ նա հայտնել է, որ առաջիկա շաբաթներին պետք է միասին ապահովեն ուսումնական տարվա հաջող մեկնարկն ու բնականոն ընթացքը՝ հաշվի առնելով համավարակով պայմանավորված սահմանափակումները եւ բացառելով մեդիասադրանքները:

ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՍՑՎԵԼ Է 214,8 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

Հայաստանի գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունում ամփոփվել են քննչական բոլոր մարմինների վարույթում քննվող քրեական գործերով պետությանը եւ համայնքներին պատճառված վնասների բացահայտման, վերականգնման, ինչպես նաեւ վերականգնումն ապահովելու նպատակով կիրառված միջոցների կիսամյակային արդյունքները:

Ըստ այդմ, 2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի իրավասու մարմինների վարույթներում եղած թվով 1 283 քրեական գործերով հարուցման պահին արձանագրվել է հանցագործությամբ պետությանն ու համայնքներին պատճառված նախնական հաշվարկով 214 782 710 692 ՀՀ դրամի վնաս, որից 204 685 121 146 դրամը եղել է պետությանը, իսկ 10 097 589 546 դրամը՝ համայնքներին պատճառված վնասը:

Քրեական գործերի նախաքննության ընթացքում նշանակված փորձաքննությունների կամ այլ քննչական ու դատավարական գործողությունների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում վերը նշված ընդհանուր վնասից արդեն իսկ հաստատվել է 128.870.997.477 ՀՀ դրամը, որից 127.428.746.833-ը եղել է պետությանը պատճառված վնասը, 1.442.250.644-ը՝ համայնքներին:

Վերը նշված թվով 1 283 քրեական գործերի նախաքննության ընթացքում հանցագործություն կատարած ենթադրյալ անձանց թիվը հունիսի 30-ի դրությամբ կազմել է 873 անձ, որոնցից 529-ին արդեն իսկ մեղադրանք է առաջադրվել, կամ որոշում կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻՆ

Հայաստանի կառավարությունը օգոստոսի 12-ի դրությամբ կորոնավիրուսի տնտեսական հետեւանքների չեզոքացման 22 ծրագրերի արդյունքում շահառուներին ընդհանուր առմամբ հասանելի է դարձել 144.5 մլրդ դրամ: Այդ գումարից սոցիալական միջոցառումներով ծախսվել է 26,2 մլրդ դրամ, տնտեսական միջոցառումներով՝ 17.5 մլրդ, եւս 19.9 մլրդ դրամ փոխառու միջոցներ են տրամադրվել: Սուբսիդավորվել են նաեւ կրթության ոլորտում ուսման վարձերի նպատակով տրամադրվող վարկերը:

Կառավարությունը նիստին հաստատեց կորոնավիրուսի տնտեսական հետեւանքների չեզոքացման եւս երկու միջոցառում: Դրանք ուղղված են զբոսաշրջային ոլորտում աշխատատեղերի պահպանմանն ու գինեգործության ու կոնյակագործության բնագավառի ընկերություններին սուբսիդավորված վարկերի տրամադրմանը:

ԱՐԹՈՒՐ ՄԵՍՉՅԱՆԸ ԹՈՂՆՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ

Ճանաչված երաժիշտ, «Առաքյալներ» լեգենդար համույթի նախկին անդամ Արթուր Մեսչյանը, ով վերջին երկու տարիների ընթացքում զբաղեցնում էր Երեւանի գլխավոր ճարտարապետի պաշտոնը, անչնական դիմումի հիման վրա 2020 թվականի օգոստոսի 17-ից պաշտոնաթող է լինում:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայաստանի կառավարության որոշմամբ, Բեյրութում տեղի ունեցած պայթյունի հետեւանքների վերացման նպատակով, Լիբանանին տրամադրվելու է հումանիտար օգնություն:

Հայաստանից առաջին չվերթը կայացել է օգոստոսի 8-ին, երկրորդը՝ օգոստոսի 9-ին՝ Արցախի ժողովրդի անունից, իսկ երրորդ ինքնաթիռը՝ սննդով, դեղորայքով եւ տեքստիլ արտադրանքով, ընդհանուր 12 տոննա հումանիտար բեռով՝ օգոստոսի 11-ին: Ինքնաթիռները Լիբանան են տեղափոխել հումանիտար օգնություն, որը պարունակել է դեղորայք եւ բժշկական պարագաներ օգոստոսի 4-ին Բեյրութի նավահանգստում տեղի ունեցած պայթյունից տուժածներին օգնություն ցույց տալու համար:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՕԳՈՒՏ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ

Բեյրութի նավահանգստում տեղի ունեցած պայթյունից տուժած լիբանանահայերին օգնելու համար «Հայաստան» համահայկական հիմնադրամում հանգանակվել է 195 հազար դոլարից ավելի գումար:

- Պայթյունից օրեր անց հիմնադրամում ստեղծվեց հաշվեհամար, որտեղ արդեն 195 հազար դոլարից ավելի գումար ունենք հավաքված: Հայաստանի ներսում տարբեր բիզնեսներ եւ բանկային համակարգը սատար կանգնեցին մեզ ու գումարներ փոխանցեցին հիմնադրամի հաշվեհամարներին,- ասաց հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը եւ հավելեց, որ այժմ քննարկումներ են ընթանում, որպեսզի հստակեցվեն Լիբանանի հայ համայնքի կարիքները:

Հիշեցնենք, որ օգոստոսի 4-ին հզոր պայթյուն է որոտացել Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի նավահանգստում: Վերջին տվյալներով, զոհերի թիվը գերազանցել է 220-ը, վիրավորվել է ավելի քան 5 հազար մարդ: Պայթյունի հետեւանքով զոհվել է 13, վիրավորվել՝ 300 հայ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

Վաղը՝ կիրակի օրը՝ օգոստոսի 16-ին, ժամը 10:30-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ, կմատուցվի Սուրբ պատարագ՝ նվիրված Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնին՝ Խաղողօրհնեքին:

Տոնի առիթով Սուրբ պատարագ եւ Խաղողօրհնենքի արարողությունը կանցկացվի նաեւ Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին մեծ շուքով եւ հանդիսավորությամբ նշում է Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը: Այն Հայ եկեղեցու հինգ Տաղավար տոներից չորրորդն է եւ Տիրամորը նվիրված տոներից ամենահինը:

Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի օրը, Սուրբ պատարագից հետո, կատարվում է խաղողօրհնեք:

«ԿԻՐԱԿՆՕՐՅԱ» ՇՈՒԿԱ

ՄԱՐԻԱՄ ՈՍԿԱՆՈՎԱ. «ՎԱՃԱՌԱՏՆԵՐԸ ԿԲԱԺՎԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ»

Աշխատանքային առողջ եւ անվտանգ պայմաններ ստեղծելու նպատակով երկրում գործող շուկաներից ու տոնավաճառներից պահանջվում է ապահովել Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հանձնարարականները:

Մասնավորապես, օբյեկտը պարտավոր է իրականացնել ջերմաչափում, դիմակի կամ պաշտպանիչ դիմավահանակի ու ախտահանիչներով տարողությունների, սոցիալական հեռավորության ապահովում:

Վերոնշյալ կանոնները չպահպանելու համար երկրի մի քանի տասնյակ օբյեկտների թույլ չեն տվել վերսկսել աշխատանքը, այդ թվում են Կախեթիի տարածաշրջանի այսպես կոչված «կիրակնօրյա» շուկաները: Սիղնաղիի մունիցիպալիտետի Բոդբե գյուղի «կիրակնօրյա» շուկան, որը ամենամեծերից է Կախեթիի տարածաշրջանում, համաճարակի պատճառով փակվել է մարտին եւ չի գործում մինչ օրս: Ինչո՞ւ:

Այս հարցին խնդրեցինք պատասխանել Բոդբեի շուկայի տնօրեն Մարիամ Ոսկանովային:

- 700 մարդ մնացել է անգործ: Դրանցից շատերը սպառողին էին ներկայացնում սեփական արտադրության գյուղմթերքներ: Շուկայի բացման խնդրանքով Բոդբեի ձորում երկու անգամ բողոքի ցույց է անցկացվել: Հիմնարկն, իհարկե, ունի խնդիրներ, այդ թվում վատ վիճակում են վաճառասեղաններն ու սանհանգույցները: Ցավոք, մինչեւ հիմա չկարողացանք բավարարել այս 2 ամսվա սահմանված պահանջները, դրա համար էլ շուկան մինչեւ օրս չի աշխատում: Բայց խնդիրների մեծ մասը կարողացանք լուծել, եւ արդեն այսօր, կարող եմ ասել, որ վաճառատեղին կվերաբացվի այս ամսին:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ՍԿՍՎՈՒՄ Է 17 ՏԱՐԵԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ 200 ԼԱՐԻԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Այսօրվանից՝ օգոստոսի 15-ից, հնարավոր կլինի գրանցվել 17 տարեկանը ներառյալ Վրաստանի քաղաքացիների 200-ական լարիի միանվագ օգնությունը ստանալու համար:

Առողջապահության նախարար Եկատերինա Տիկարաձեի խոսքով, 17 տարեկանը ներառյալ երեխաները օգնություն ստանալու համար հատուկ հարթակում հնարավորություն կունենան գրանցել իրենց տվյալները, իսկ ֆինանսական օգնությունը կփոխանցվի մինչեւ ուստարվա մեկնարկը՝ սեպտեմբերի 1-15-ն ընկած ժամանակահատվածում:

Ինչպես նշեց Եկատերինե Տիկարաձեն, այսօր Վրաստանում կա 880 հազար երեխա, ում օգնությունը հնարավորություն կտա առանձնապես բազմազավակ ընտանիքներում դիմանալ տնտեսական ճգնաժամի հետեւանքներին, նորմալ պատրաստվեն նոր ուսումնական տարվան:

Հիշեցնենք. օգոստոսի 6-ին Վրաստանի կառավարության որոշմամբ, Վրաստանի մինչեւ 17 տարեկանը ներառյալ քաղաքացիները պետությունից կստանան 200-ական լարիի միանվագ օգնություն:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՎԱԶԵԼ Է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԾՐՋԱՆՆԵՐԻ

G&T ընկերության կողմից անցկացված ուսումնասիրության համաձայն, 2019 թվականի հունիսին Վրաստանի մայրաքաղաքում ծեւակերպվել է բնակարանային 2776 առքուվաճառքի պայմանագիր:

Հետազոտման համաձայն, 2020 թվականի երկրորդ եռամսյակում բնակարանների իրացման ցուցանիշը ամենաշատը նվազել է **Չուղուրեթիի** շրջանում՝ 76 տոկոսով, իսկ մնացածներից 47 տոկոսով: Այդ ցուցակում վերջին տեղը զբաղեցնող **Վակեի** շրջանում այդ ցուցանիշը կազմել է 47 տոկոս:

Ինչ վերաբերում է ըստ թաղամասերի անշարժ գույքի արժեքին, ապա 2020 թվականի երկրորդ եռամսյակում բնակարանների գները՝ ըստ թաղամասերի ու քառակուսի մետրի, ունեին հետեւյալ տեսքը.

Մթածմինդա՝ 1346 ԱՄՆ դոլար (ավելացել է 21 տոկոսով), **Վակե**՝ 896 դոլար (նվազել է 6 տոկոսով), **Սաբուրթալո** 790 դոլար (նվազել է 5 տոկոսով), **Նածալադեւի**՝ 585 դոլար (ավելացել է 7 տոկոսով, **Գլդանի**՝ 561 դոլար (ավելացել է 6 տոկոսով), **Կրծանիսի**՝ 844 դոլար (ավելացել է 12 տոկոսով), **Չուղուրեթի**՝ 673 դոլար (նվազել է 28 տոկոսով), **Դիդուբե**՝ 671 դոլար (ավելացել է 4 տոկոսով), **Իսանի**՝ 606 դոլար (նվազել է 6 տոկոսով), **Դիդի Դիղոմի**՝ 531 դոլար (նվազել է 2 տոկոսով), **Սամգորի**՝ 531 դոլար (գինը մնացել է նույնը):

97 տարեկանում կյանքից հեռացավ Սարգիս Տեր-Գուլանյանը, մարդ, ով ապրեց արդար, ապրեց ազնիվ եւ արժանապատիվ կյանքով, ու երեւի Աստված փոխհատուցեց նրան՝ շնորհելով գրեթե մի ամբողջ դար ապրելու իրավունք: Նա մեծ ժառանգություն է թողել՝ 6 զավակ, 18 թոռ, 32 ծոռ եւ մեկ թոռան թոռ:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը վշտակցում են գրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանին, նրա եղբայրներին, նրանց սիրելի հոր՝ Ախալքալաքիի մունիցիպալիտետի Գոման գյուղի հարգված անձնավորություն

Սարգիս Հովհաննեսի ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ իրենց ցավակցությունն են բերում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.«Միմինո» ֆիլմում գլխավոր դերակատար հայ անվանի դերասան, ում անվանել են «Տխուր աչքերով մարդ»: 5.Հայ գրող, Թումանյանի «Վերնատուն» խմբակի անդամ: 8.Անվստահ, ցնցվող, անհաստատ: 11.Ե'վ կարի, ե'ւ լվացքի ...: 13.Մտերիմ, անխախտ: 14.Պարարտ, հսկայամարմին: 15.Լեւոն Շանթի հերոսուհի: 16.Ժյուլ Վեռնի կապիտանը: 17.Կում, մի բերանի պարունակություն: 18.«..., նորից վառիր հուրդ հայրենյաց» (ժող. երգ): 19.Հոգնակիակերտ մասնիկ: 20.Ժողով, խորհրդակցություն: 21.Մոմի հումքը: 23.Հարցական դերանուն: 25.Հանրահայտ դերասան ... Պետրոսյան: 28.Ստել, խաբեություն կատարել: 30.Թերությունից զուրկ, կատարյալ: 32.Քաջ, անվախ, անահ: 33.Քաղաք..., արի..., սիրի...: 34.Ե'վ Սարգսյանը, ե'ւ Ջանիբեկյանը: 36.Քավորի սիրելին: 37.Պատմվածք «...յի տոնածառը»: 38.Եմենի ոստանը: 41.Հայկական ժողովրդական նվագարան: 42.Կոմիտասի մշակումներից՝ «..., ...»: 44.Սառած մագման: 45.Հովվի նվագարան: 47.Դաշտի գեղեցիկ ծաղիկ: 48.Թբիլիսիում ծնված գրող Նարդոսի հերոսուհի: 50.Խոհանոցային գործիք: 51.Հայ կին գրող: 52.Իրաքի բնակիչ: 53.Խարդախ, ցածրոգի: 54.Հին աշխարհամաս: 55.Ե'վ լիճ, ե'ւ գավառ Արեւմտյան Հայաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հմուտ, փորձառու կոմպոզիտոր, դիրիժոր: 2.Եկեղեցում ծառայող հոգեւորական: 3.Մյանմա պետության մայրաքաղաքը: 4.Լեռնագագաթ Պատմական Հայաստանում: 6.Հայ ժողովրդի դանիացի մեծ բարեկամներից: 7.Պետություն Հարավային Եվրոպայում: 9.Մաշտոցյան այբուբենի տառ: 10.«... էն օրերուն» (Համաստեղ): 12.Հեռուստահաղորդավարուհի ... Չիլինգարյան: 22.Վախթանգ Կիկաբիձեի դերերից: 23.Կետադրական նշան: 24.Ստալինի զինակիցն ու «աջ» ձեռքը: 25.Վրաց անվանի դերասանուհի: 26.Քաղաք Շվեյցարիայում: 27.Ժխտական նախածանց: 28.Համո Բեկնազարյանի ֆիլմերից: 29.Կողպեքը բացողը: 31.Եր..., կուպ..., խոս..., մարս...: 34.Ասիական պետություն: 35.Պատերազմի ժամանակ նամակատար, լուր բերող: 39.Գյուղ Վրաստանի Ախալքալաքիի մունիցիպալիտետում: 40.Լավ, բարի լուր: 43.... Բլանկա: 46.Պարսից կայսր: 49....գործարան, ...ուղիներ: 52.Շղարշ, երեսի ծածկոց:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սպասելիք: 7.Պղինձ: 8.Համազարկ: 11.Իսահակ: 15.Տատ: 17.Գենետիկա: 19.Ձինակիր: 21.Կակա: 22.Ադամո: 25.Ռումիներեն: 27.Ռանդա: 28.Պանասոնիկ: 33.Բլբլան: 34.Վանեսա: 35.Նիշ: 36.Տուժա: 37.Հոդված: 40.Կաֆե: 41.Նարկոզ: 42.Թամարա: 45.Լեզու: 46.Աբաս: 47.Քանդակ: 48.Մոցարտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Պլաստիկ: 3.Սպարտակ: 4.Իբր: 5.Աղքատ: 6.Գնդակ: 9.Այգի: 10.Կին: 12.Սեղան: 13.Հիմար: 14.Կանոն: 16.Անասնաբուժարան: 18.Երամ: 20.Կառապան: 23.Դելոն: 24.Մետիս: 26.Իրավ: 27.Ռոբ: 29.Անիրազեկ: 30.Սարո: 31.Ներվ: 32.Կայծ: 36.Տանիք: 37.Հեթում: 38.Դիմաց: 39.Ագրար: 40.Կոլա: 43.Աբա: 44.Աստ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445